«Հաստատում եմ»
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտորի պաշտոնակատար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

---------- Դ. Ռ. Գալոյան

«15» հունիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լիլիթ Մանվելի Պետրոսյանի՝ «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Մասնակցում էին՝ «Մակրոէկոնոմիկայի» ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Կ.Հ. Գրիգորյանը, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ, գիտության գծով պրոռեկտոր Թ.Մ. Մկրտչյանը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ Ծ.Ջ. Կարապետյանը, Ա.Հ. Մուրադյանը, Ռ.Ս. Ղանթարչյանը, Ք.Ջ. Վարդանյանը, Գ.Ա. Ավագյանը, տնտեսագիտության թեկնածու, ասիստենտներ Ա.Ս. Ջանջոյանը, Վ.Ի. Տիգրանյանը, դասախոս Մ.Ա. Ղարագյոզյանը, լաբորանտ Մ.Ա. Արղությանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը և ուսումնասիրվող հիմնախնդրի կարևորությունը կասկած չեն հարուցում, քանի որ անցումային փուլում գտնվող երկրները բախվում են բազմաթիվ բացասական երևույթների հետ, որոնցից է ստվերային տնտեսությունը: Այն իր տարբեր դրսևորումներով հնարավորություն չի տալիս իրականացնել արդյունավետ տնտեսական, սոցիալական և քաղաքական բարեփոխումներ: Հայաստան Հանրապետությունը նույնպես բախվում է ստվերային տնտեսության հիմնախնդրին, որը ազգային անվտանգությանը սպառնացող գործոն է: Ուստի, արդիական է ստվերային տնտեսության հիմնախնդրի համակողմանի հետազոտության իրականացումը, ՀՀ-ում ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության, այդ փոխազդեցության կառավարման հիմնախնդիրների բացահայտումը, հատկապես, որ ՀՀ-ում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումները թեև ուղղված են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, սակայն, եկամուտների բևեռվածությունը, արտագաղթի դեռևս զգալի մակարդակը փաստում են սոցիալական լարվածության մասին:

Հեղինակը հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորելու նպատակով նշում է, որ ցանկացած տնտեսության «քաոսային, չկանխատեսվող և տարերային» զարգացման առաջնային մեխանիզմը ստվերային տնտեսությունն է, ինչն առաջացնում է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքեր, ինչպիսիք են՝ եկամուտների կրճատումն ու անհավասարաչափ բաշխումը, ոչ ֆորմալ զբաղվածությունը, խորացող աղքատությունն ու բնակչության արտագաղթը: Ուստի, կարծում է, որ ստվերային տնտեսության դեմ պայքարը լավագույնս կազմակերպելու համար անհրաժեշտ է վերանայել տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմներն ու լծակները, իրականացնել հետևողական քաղաքականություն, գործադրել արդյունավետ գործիքակազմ: Հեղինակը փաստում է, որ բազմաթիվ աշխատանքներ են կատարվել ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայազգի հետազոտողների կողմից, ուղղված ստվերային տնտեսության մասշտաբների գնահատմանը և դրանց ազդեցության բացահայտմանը տնտեսության առանձին ոլորտների վրա, սակայն, գտնում է, որ ստվերային տնտեսության գնահատումը, ճշգրիտ գնահատական տալը կարծես թե իրատեսական չէ, այսինքն՝

ստեղծված է մի իրավիճակ, որ դեռևս չկա մեկ միասնական մոտեցում, թե ինչպես կարելի է գնահատել ստվերային տնտեսության մասշտաբները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ:

Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության ստվերային հատվածն է, իսկ հետազոտության առարկան՝ ստվերային տնտեսության կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների ու բնակչության կենսամակարդակի փոխազդեցության հիմնախնդիրները և այդ նպատակի լուծման համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրանց դերը սոցիալ-տնտեսական զարգացման գործում,
- իրականացնել գործոնային վերլուծություն ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների վերաբերյալ,
- գնահատել MIMIC մեթոդով ստվերային տնտեսության նախադրյալների ձևավորման հիմքերը,
- մշակել ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմներ,
- առաջարկել ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատման մոտեցումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել ստվերային տնտեսության վերաբերյալ տարբեր տնտեսագետների գրքերը, գիտական հոդվածները և ինտերնետային կայքերը:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ

կենտրոնական բանկի պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակած զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, էմպիրիկ, տնտեսաչափական վերլուծության, հարցումների մեթոդներ և գործիքներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ՆՈՐՈՒՅԹԸ:

Հեղինակի կողմից ներկայացված գիտական նորույթներն են՝

1. MIMIC գործիքակազմի միջոցով գնահատվել է ստվերային տնտեսության չափն՝ ըստ՝ աշխատուժի կառավարման մակարդակի, ինքնազբաղվածության, անվանական ՀՆԱ և կանխիկ փողի, ինչպես նաև՝ առաջարկվել են միջոցառումներ ուղղված ստվերային տնտեսության կրճատմանը բնակչության կենսամակարդակի բարելավման գործում:
2. Կաուֆման-Կալիբարդիի մեթոդի հիման վրա գնահատվել և բացահայտվել են ՀՀ-ում ստվերային տնտեսության չափը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի սպառման և իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի:
3. Սպառման առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների՝ հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում, բացահայտվել են ստվերի առաջացման նախադրյալները և դրանց նվազեցման միտումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել է հետազոտության նպատակը, հստակեցվել են նպատակի իրագործման տեսանկյունից կարևորվող խնդիրների շրջանակը, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական գիտական արդյունքները և գիտական նորույթը, ստացված արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը, փորձարկումը և հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների առաջացման տեսամեթոդաբանական հիմքերը» վերնագրված գլխում

մեկնաբանվել են ստվերային տնտեսության սահմանման մոտեցումները՝ առաջին խմբում ներառելով նրանք, ըստ որոնց ստվերային տնտեսական գործունեությունը սահմանվում է որպես պարզապես չգրանցվող, չհաշվառվող տնտեսական գործունեություն, երկրորդ խմբում ներառելով նրանք, ըստ որոնց ստվերային տնտեսական գործունեությունը սահմանվում է որպես տնտեսական գործունեության ծավալման հիմք՝ հիմնվելով վարքաբանական բնութագրերի վրա: Մեկնաբանվել են ստվերային տնտեսության ձևավորման նախադրյալները, ստվերային տնտեսության՝ «երկրորդային», «գորշ», «սև» տեսակները, դասակարգվել են ստվերային տնտեսության վրա ազդող գործոնները, նկարագրվել են ստվերային տնտեսության գնահատման ուղղակի և անուղղակի մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ստվերային տնտեսության և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության գնահատումը ՀՀ-ում» գլխում գնահատվել է ստվերային տնտեսության չափը, մշակվել է էկոնոմետրիկ մոդել, որտեղ ստվերային տնտեսությանը նպաստող գործոններից առանձնացվել են՝ աշխատուժի կառավարման մակարդակը և ինքնազբաղվածության մակարդակը:

ՀՀ-ում ստվերային տնտեսության մասշտաբները հաշվարկվել են MIMIC մեթոդի հիման վրա: ՀՀ-ում ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման մակարդակների, ինքնազբաղվածության, կանխիկ փողի, անվանական ՀՆԱ-ի ցուցանիշների միջև առկա պատճառահետևանքային կապերը բացահայտելու նպատակով առաջարկվել են վարկածներ: Դրանք են՝ ՀՀ-ում ստվերային տնտեսության, աշխատուժի կառավարման և ինքնազբաղվածության մակարդակների միջև գոյություն ունի էական կապ, ՀՀ-ում անվանական ՀՆԱ-ի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ, ՀՀ-ում կանխիկ փողի և ստվերային տնտեսության միջև գոյություն ունի էական կապ:

MAX-MIN մեթոդի հիման վրա աշխատանքում հաշվարկվել է ՍԳԻ-ի և իրական ՀՆԱ–ի կապը: Ներկայացվել են բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները, մատնանշվել են բնակչության կենսամակարդակի բարելավման միջոցառումներ:

Ատենախոսության երրորդ՝ «Ստվերային տնտեսության նվազեցման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում Կաուֆման-Կալիբարդիի մեթոդով

գնահատվել են ստվերային տնտեսության մասշտաբները: Հաշվի առնելով այն, որ էլեկտրաէներգիայի սպառման շարժընթացը համապատասխանում է ընդհանուր տնտեսական ակտիվության շարժընթացին, հաշվարկվել են էլեկտրաէներգիայի սպառման էլաստիկության գործակիցներն ըստ ՀՆԱ-ի:

Հիմնավորելով առաջին անհրաժեշտության ապրանքներ հանդիսացող հացի, շաքարավազի, կարագի և բուսական յուղի շուկաներում ստվերի առկայությունը, գնահատվել է այդ շուկաներում ստվերը, բացահայտվել են ստվերի առաջացման պատճառները:

Եզրակացությունների տեսքով ձևակերպված հետազոտության հիմնական արդյունքները և դրանցից բխող առաջարկությունները ներկայացվել են «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում, բերվել են օգտագործված գրականության ցանկը և հավելվածները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Ստորև ներկայացվում են ատենախոսության վերաբերյալ դիտողությունները՝

1. Ատենախոսության թեմայի վերնագրի և աշխատանքի կառուցվածքի ու բովանդակության միջև որոշակի համապատասխանեցման կարիք է զգացվում: Այսպես՝ ատենախոսությունը վերնագրված է «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում», սակայն, բովանդակության մեջ առանձին գլուխ կամ ենթահարց նվիրված չէ կառավարման հիմնախնդիրներին: Երկրորդ և երրորդ գլուխների ու ենթահարցերի վերնագրերի միջև նույնպես համապատասխանեցման կարիք է զգացվում: Գլուխ 2-ի վերնագրից բխում է, որ հեղինակը պետք է ներկայացներ ստվերային տնտեսության և կենսամակարդակի փոխազդեցության գնահատումը, սակայն, ըստ 2.1 հարցի վերնագրի, իրականացրել է ստվերային տնտեսության հետևանքների գնահատում, իսկ 2.2-ում՝ կենսամակարդակի վրա ազդող գործոնների վերլուծություն, այսինքն՝ գլխի վերնագրի և դրա բովանդակության միջև համապատասխանեցման կարիք է զգացվում: Նույնը վերաբերում է 1.1 ենթահարցի վերնագրին և շարադրանքին: Նման խնդիր առկա է նաև 1.2

ենթահարցի վերնագրի և բովանդակության միջև. այս ենթահարցում քննարկվել են ստվերային տնտեսության վրա ազդող գործոնները, ներկայացվել են ստվերային տնտեսության գնահատման միկրո և մակրո մոդելները, մինչդեռ ենթահարցը վերնագրված է «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գործոնային վերլուծությունը»:

2. Թեև 2.1 ենթահարցը վերնագրված է «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատումը MIMIC գործիքակազմի միջոցով», սակայն, 2.1 հարցի սկզբում՝ 33-41 էջերում, միայն ստվերային տնտեսության գնահատման մեթոդների շարադրանքից հետո է անդրադարձ կատարվել MIMIC մեթոդին: 2.1 ենթահարցի առաջին 9 էջերում հեղինակը քննարկել է ստվերային տնտեսության գնահատման մեթոդների հարցը, հաճախ կրկնելով աշխատանքի նախորդ հատվածներում արտահայտած մտքերը:

3. 2.1 ենթահարցի վերնագրի համաձայն՝ հեղինակը պետք է իրականացներ ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատում, սակայն, իրականացվել է ստվերային տնտեսության և դրա վրա ազդող գործոնների (ընդամենը երկու գործոնի), ստվերային տնտեսության և անվանական ՀՆԱ-ի կապի, կանխիկ փողի և ստվերային տնտեսության կապի ռեգրեսիոն վերլուծություն: Այսինքն՝ ենթահարցի վերնագրի և բովանդակության միջև համապատասխանեցման կարիք է զգացվում: Ատենախոսության հեղինակը չի հիմնավորում, թե ինչու է ինքնազբաղվածությունը համարում ստվերային տնտեսություն առաջացնող գործոն: Հեղինակը նաև տնտեսաչափական մոդել է կիրառել, որպեսզի պարզի հայտնի իրողություններ՝ ստվերային տնտեսությունը ավելացնում է անվանական ՀՆԱ-ն, ստվերային տնտեսությունը ավելացնում է կանխիկ փողը /ոչ թե կանխիկ փողի նկատմամբ պահանջարկը, այլ ուղղակի՝ կանխիկ փողը/: 2.1 հարցի վերջում կատարված եզրակացությունը, որ ՀՀ-ում ստվերային տնտեսության առաջացման հիմնական գործոնը կանխիկ փողն է /էջ 52/, չի բխում հեղինակի կիրառած տնտեսաչափական մոդելի արդյունքներից, քանի որ, ըստ մոդելի, ստվերային տնտեսությունն էր ազդում կանխիկ փողի վրա, և ոչ թե՝ հակառակը:

4. Էջեր 29-30-ում հեղինակը գտնում է, որ ներկայումս ստվերային տնտեսության մասշտաբների որոշման ոլորտում իտալական մեթոդն ամենահեղինակավորն է, սակայն, չեն բերվել բավարար աղբյուրներ, որոնք կհիմնավորեն հեղինակի նման բնորոշումը: Նման պարագայում հարց է առաջանում, թե հեղինակն ինչու այդ մեթոդով չի իրականացրել ՀՀ-ում ստվերային տնտեսության չափերի գնահատում, հատկապես որ 2.1 ենթահարցի էջ 38-ում հեղինակը նշել է, որ ՀՀ-ում իտալական մեթոդը շատ նպատակահարմար է:

5. 2.2 հարցի վերջնամասում, հեղինակը ներկայացրել է կենսամակարդակի բարելավման միջոցառումներ, որոնք վերլուծության մեջ չեն քննարկվել և դեկլարատիվ են, միջոցառումներում նշված արդյունքներին հասնելու կոնկրետ ուղի կամ գործիք ներկայացված չէ: Այդ ձևակերպումները խմբագրման կարիք ունեն, օրինակ՝ միջոցառում 1.«աղքատության հաղթահարման համատեքստում...ապահովել քանակական աճ... այլև՝ սոցիալ-տնտեսական հետևանքների ինտենսիվ զարգացում», միջոցառում 3. «...պետությունը իրականացնում է եկամուտների վերաբաշխում՝...կապիտալ գործարքների միջոցով» /էջ 69/, միջոցառում 4. «...պետության կողմից հակադեմփինգային քաղաքականության կիրառում» /էջ 69-70/:

6. Ատենախոսության 3.1 ենթահարցում, գծապատկերներ 3.1.1.-3.1.5-ի տվյալները վերլուծելիս, հեղինակի եզրահանգումները հիմնավորման կարիք ունեն, մասնավորապես, ըստ հեղինակի, ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության և արտահանման ծավալները ավելացել են, քանի որ «էլեկտրաէներգիայի սպառման և ներմուծման ծավալները նվազել են... » /էջ 72, 75, 76/, էջ 74-ում նշում է, որ դրանց և ևս երկու ցուցանիշի փոփոխությունները պայմանավորված են էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ, էջ 75-ում նույն ցուցանիշների փոփոխությունները կապում է փոխարժեքի տատանումների հետ, իսկ արդեն էջ 76-ում՝ գնաճի հետ, կրկին միմյանց խառնելով գնաճն ու «գնաճի աճի տեմպը»:

7. 3.2.1. գծապատկերն ամբողջությամբ չի երևում, բացի այդ, ճիշտ չէ հացի արտադրության և սպառման ծավալների փոփոխությունը ներկայացնել դրամական արտահայտությամբ, առանց հացի գների փոփոխությունը ներկայացնելու և կատարել վերլուծություններ: Անհասկանալի է հետևյալ միտքը՝

ավելացել է «հացի սպառման նորման՝ 0.04 մլն. դրամով» /էջ 81/, հացի սպառման նորման /ըստ բերված հավելված 9-ի/ մեկ շնչի հաշվով 2010-2017թթ.-ին նույնն է՝ տարեկան կտրվածքով՝ 91.3կգ: Էջ 81-ում հեղինակը փաստում է, որ 2017թ.-ին 2010թ.-ի համեմատ հացի արտադրության ծավալները ավելացել են, իսկ հացի սպառման ծավալները՝ նվազել, այնուհետև էջ 82-ում գրում է, որ 2010-2017թթ. հացի սպառման ծավալները գերազանցել են հացի արտադրության ծավալները:

8. 82-95 էջերում կատարված վերլուծություններում առկա են թվաբանական անճշտություններ, առանց աղբյուրները նշելու թվային տվյալների կիրառում, տոկոսի և տոկոսային կետի, մեկ շնչին ընկնող սպառման նորմայի ֆիզիկական ծավալի անփոփոխության, սակայն դրա՝ դրամական արտահայտությամբ փոփոխության բազմաթիվ շփոթմունքներ, միևնույն ցուցանիշները և՛ աղյուսակով, և՛ գծապատկերով ներկայացում:
9. Ատենախոսության եզրակացությունները թույլ են կապված տեքստի բովանդակության և ատենախոսությունում առաջադրված խնդիրների հետ: Ներկայացված առաջարկությունները դեկլարատիվ են:
10. Աշխատանքում առկա են ոճական բնույթի որոշ անհարթություններ, սխալ ձևակերպումներ. էջ 24՝ ընդհանուր պետական հատվածի գործունեություն, էջ 34՝ ավելի ուղղակի բնույթ, էջ 34 ստվերային տնտեսության արտերկրյա փորձ, էջ 39՝ աշխատող բնակչության կատեգորիա ձևավորելիս, էջ 41՝ զարգացած վիճակագրական ծառայություն, էջ 57՝ բարձր մակարդակի զբաղվածություն, էջ 59՝ բնակչության զարգացման ցուցանիշներ, բազմաթիվ էջերում՝ 1 ԱՄՆ դրամ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերոնշյալ դիտողություններով հանդերձ, Լիլիթ Մանվելի Պետրոսյանի՝ «Ստվերային տնտեսության սոցիալ-տնտեսական հետևանքների և բնակչության կենսամակարդակի փոխազդեցության կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն կատարված աշխատանք է:

Ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ

հեղինակը, հաշվի առնելով մասնագիտական խորհրդում ատենախոսության քննարկման ընթացքում ներկայացումն ու հարցադրումների պատասխանները, կարող է հավակնել Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը: Սեղմագիրն իր բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ որպես առաջատար կազմակերպության, մակրոէկոնոմիկայի ամբիոնի նիստում (08.06.2020թ. արձանագրություն թիվ 13):

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք.Ջ. Վարդանյան**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Գ.Ա. Ավագյան**

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ամբիոնի վարիչ **Կ.Հ. Գրիգորյան**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ջոնիկի Վարդանյանի, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Արամի Ավագյանի և տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ Կարեն Համլետի Գրիգորյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

15.06.2020թ.